

ք. Երևան

<<03>> 05

2022թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Աղամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Դավիթ Պետրոսյան, ի դեմս տնօրեն Դ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 11.02.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/31 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են և կնքված պայմանագրի 4.2 կետը շարադրել հետևյալ կերպ.

- 4.2 Գնորդն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայն սույն համաձայնագրի պայմանների /համաձայնագրի 1.2 կետ/, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

1.2 Սահմանված կարգով ընդունված Ծառայության դիմաց վճարումը կատարվում է 90 օրվա ընթացքում:

1.3 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 11.02.2022թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ

ք. Երևան, Արմենակյան 108/4

ՀՎՀՀ 01508793

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150001612200100

Մ. Աղամյան

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Դավիթ Պետրոսյան

ՀՀ Արարատի մարզ, գ. Ոստան, Արարատյան 80

ՀՎՀՀ 47815982

h/h 2051532264801001

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ

davagiv@mail.ru

096-59-50-10

Դ. Պետրոսյան

